




ԱՐՄԵՆԻԱՅԻ ԹՎԱՅՈՒԹՅՈՒՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԻՐՎԱԾ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Ուսմինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքայիսկովով Սարգիկյանն ընթերցողներին է ներկայացրել Վազգեն Վեհափառի մասին իր հուշերից մի շաբաթերքից և գեղեցիկ փոքրիկ պատմություններ, որոնք բնրված են նաև կից ուսմիներների թարգմանությամբ¹:

Գրքում գեկեղված են 18 լուսանկարներ, որ Սրբազն Հայրը պատրկերված է Վազգեն Վեհափառի հետ: Առաջին լուսանկարը կապարվել է 1956 թվականին: Լուսանկարում պատրկերված է Հին Վեհարանում Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի միաբաների ներկայությամբ հայրապետական սրբագրա կոնդակն ընթերցող երիդանարդ Տիրայր Վարդապետը: Վերջին լուսանկարը 1994 թվականից է և ներկայացնում է աչքերը փակած Հայրապետի առջև խոնարիկած Տիրայր արքայիսկովովու Սարգիկյանին:

Խնչպես հուշագրության սկզբում գրում է Սրբազնը, նա Վազգեն Վեհափառին ճանաչել է փակավին 1948 թվականից, երբ ապագա Հայրապետը Մայր Աթոռ էր եկել Գևորգ Զ Կաթողիկոսի հրավերով: Տիրայր Սրբազնը նշում է, որ 1955 թվականի ազգային-եկեղեցական սրբագրումար ժողովի, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդրվեց Վազգեն Առաջինը, պարզաբանակիր այսօր ողջ են ինքը ու ևս երկու հոգի:

Այս գրքի հուշագրական դրվագներից մեր առջև հասնում է հանդարդ, խոհեմ և իմաստուն Հայրապետը: Սպորեն ներկայացնում ենք Տիրայր Սրբազնի հուշագրությունից «Օրմանյան մարտանու պատմությունը» դրվագը².

«1964 թ-ին ուղիղ 40 տարի առաջ, Ա. Էջմիածնում Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իմ ձեռնադրեց եպիսկոպոս: Վեհարանում, պաշտոնական ճաշկերույթի ժամանակ առ իմ ձեռնադրեց եպիսկոպոսական մի մատանի, որը պատկանել էր Գևորգ Զ Կաթո-

¹ Տես՝ Ուսմինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքայիսկովով Սարգիկյանի հուշերը Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասին (մահվան 10-րդ դարերից առթիվ), ARARAT, 2004 թ., 59 լ.ց.

² Գիրքը գրված է արևելահայերեն և նոր ուղղագրությամբ:

դիկոսին, Աշեղով նաև, որ լինելով ճրա քարտուղարն ու սիրելի սամը, այդ մատանուն եմ արժանի: Դա մի մեծ, ծանր մատանի էր, կանաչ զմրուտ քարով: Մատանին դժվար էր կրել, այն շատ ծանր էր: Երեք տարի անց, Վեհափառի կողմից հրավիրվեցի Վարդանանց տոնի կապակցությամբ պատարագերու և քարոզելու Ս. Էջմիածնում: Բազմաթիվ հյուրեր էին հրավիրված պատարագին: Պատարագից ու քարոզից հետո, պաշտոնական ճաշկերությունից ժամանակ, Վեհափառը պատմեց, թե ինչպես 1951 թ-ին երբ ինքը եպիսկոպոս ձեռնադրվեց, Գևորգ Զ Կաթողիկոսը նրան նվիրեց մի պարզ մատանի ու երբ նա վերադարձավ Կոստանցա քաղաքը իր անդրանիկ պատարագը մատուցելու, այնուհետ, տեղական թաղական խորհուրդը նրան նվիրեց մի այլ մատանի: Ու պատմեց այդ մատանու պատմությունը:

Մի օր, ծերունազարդ մի կին գնացել էր Կոստանցայի հայ ոսկերչաներից մեկի մոտ և ասել, որ ինքը Օրմանյան պատրիարքի հոգեզավակն է, իսկ իր ամուսինը Թուրքիայում հյուպատոս է եղել: Ու երբ նա հյուպատոսի իր պաշտոնավարությունը ավարտել է, Օրմանյան պատրիարքը ի հաշան հրաժեշտի իրենց մի մատանի է նվիրել: Այժմ իրենք վերադարձել են իրենց ծննդավայրը՝ Կոստանցա: Մեծարասակ ծնողները ցանկանում են իրենց երկու աղջկեներին թողնել մի հիշատակ այդ մատանուց ու դրամից ուզում են պատրաստել երկու այլ մատանիներ նրանց համար: Ոսկերիչը, որը նաև թաղական խորհրդի անդամ էր, տեսնելով մատանին ու իմանալով, թե ում է այն պատկանել, կնոքը ասում է, որ ափսոս է այդ մատանին փշացնել ու առաջարկում է աղջկեների համար պատրաստի երկու այլ մատանիներ, ցուց տալով կանացի մատանիների գեղեցիկ նմուշներ: Նա նշում է միաժամանակ, որ այդ մատանին արժանի նվեր կարող է հանդիսանալ Վազգեն եպիսկոպոսի համար, որը շուտով այցելելու է Կոստանցա իր անդրանիկ պատարագը մատուցելու: Կինը ուրախությամբ ընդունում է առաջարկը: Երեկոյան թաղական խորհրդի ժողովին, ոսկերիչը ներկայացնում է մատանու պատմությունը, ասելով նաև, որ չորս ադամանդ պակասում են մատանուց (մոտ 20-22 քարեր էին զարդարում այդ մատանին): Թաղական խորհրդը որոշում է կայացնում ավելացնել պակասող ադամանդները և Վազգեն եպիսկոպոսի անդրանիկ պատարագից հետո, պաշտոնական ճաշկերություն այն նվեր մատուցել նրան: Եվ այսպես, պատարագից հետո, Օրմանյանի մատանին նվիրում են Վազգեն եպիսկոպոսին: Չորս տարի շարունակ Վազգեն սրբազնը կրում է այդ մատանին, նոյն այդ մատանինով գալիս է բազմելու նաև Լուսավորչի գամին:

Մատանու պատմությունը ներկայացնելուց հետո, Վեհափառը ներկաներին ասաց. «Ի վարձատրություն այս փառավոր պատարագի ու քարոզի, այս համբավավոր մատանին նվիրում եմ Տիրապար Սրբազնին, քանի որ այժմ նա՞և ուսմինահայ թեմի առաջնորդը և որ ուսմինահայերն էին, որ այս մատանու այն չորս կորած ադամանդները ավելացրին ու նույն ուսմինահայերն էին, որ այս նվերը մատուցեցին ինձ»: Ահա այսպես ես ստացա Օրմանյանի նշանավոր մատանին»: